


2/26.5/8446



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
Տ. ՄԻՄՈՆՅԱՆ

« 05 » 05 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0086-21

Ձեռնարկողը՝

«ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ» ՍՊԸ

ք. Գյումրի, Թբիլիսյան խճ. 1

Գործունեությունը՝

Կառնուարի անդեզիտների հանքավայրի
անդեզիտաբազալիտների «Կառնուար-1» տեղամասի
արդյունահանման և ջարդիչ կայանքի շահագործման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվեքվություն
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Առդիր՝ 6 թերթ



Գ. Գևորգյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ **0086-21**
<05> 05 2021թ.

Շիրակի մարզի Կառնուտի անդեզիտների հանքավայրի
անդեզիտաբազալտների «Կառնուտ-1» տեղամասի արդյունահանման և ջարդիչ
կայանքի շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվության

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

«ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿՈՈՊՇԻՆ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/,
նախագծային փաստաթղթեր
Շիրակի մարզ, Ախուրյան համայնք

Տեղադրման վայրը՝

Ներածական մաս. «ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿՈՈՊՇԻՆ» ՍՊԸ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է Շիրակի մարզի Կառնուտի անդեզիտների հանքավայրի անդեզիտաբազալտների «Կառնուտ-1» տեղամասում իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ, իսկ բացահանքի հարևանությամբ տեղադրել ջարդիչ կայանք, որտեղ կմշակվի արդյունահանված հումքը;

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Շիրակի մարզի Կառնուտի անդեզիտների հանքավայրի անդեզիտաբազալտների «Կառնուտ-1» տեղամասի արդյունահանումը՝ որպես նախատեսվող գործունեություն դասակարգվում է «Ա» կատեգորիայի:

Նկարագրական մաս. Կառնուտի անդեզիտաբազալտների հանքավայրի «Կառնուտ-1» տեղամասը և ջարդիչ կայանքի համար նախատեսված տարածքը գտնվում են Ախուրյանի ենթաշրջանում՝ Կառնուտ գյուղից 0.5կմ արևելք, Ախուրյան համայնքից 5.6կմ հյուսիս-արևելք, Հովիտ գյուղից 2.5կմ հյուսիս-արևմուտք: Տեղամասը հողաձածկ և ասֆալտապատ ավտոճանապարհներով կապված է նշված բնակավայրերի և Գյումրի քաղաքի հետ: Տարածքը տեղակայված է 1633-1705մ բացարձակ բարձրությունների վրա, զբաղեցնում է 3.45հա տարածք: Հանքավայրի կոորդինատները WGS -84 համակարգով հետևյալն են՝

- | | |
|----------------|--------------|
| 1) x = 4516785 | y = 8412625, |
| 2) x = 4516977 | y = 8412679, |
| 3) x = 4516932 | y = 8412904, |
| 4) x = 4516866 | y = 8412938: |

Ջարդիչ կայանքի համար նախատեսված տարածքը զբաղեցնում է 0.709557 հա մակերես, սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը: Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և անասնապահության:



արտադրական նշանակության են, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների:

Կայանքի երկու եզրերի կոորդինատներն են WGS -84 համակարգով հետևյալն են՝
1) $x = 4516726$ $y = 8412682$, 2) $x = 4516700$ $y = 8412671$:

Կառնուտ - 1 տեղամասը և ջարդիչ կայանքը Կառնուտ բնակավայրի ամենամոտ կառուցապատված տարածքից գտնվում են ավելի քան 500մ հեռավորության վրա: Տեղամասը բնութագրվում է թեք բլրային ռելիեֆով և սահմանափակվում է ընդերքի ուսումնասիրության թույլտվությամբ ամրագրված սահմաններով: Տարածքը զուրկ է ծառափային բուսականությունից ստորերկրյա և գրունտային ջրերից: Հարևանությամբ բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, կամ վտանգված էկոհամակարգերը:

Մակաբացման ապարները ներկայացված են 0.4-ից 0.6 մ (միջինը 0.49 մ) հզորության անդեզիտաբազալտների տարաչափ բեկորներ պարունակող դեյուվիալ առաջացումներով, բացակայում է հողաբուսական շերտը:

ՀՀ Շիրակի մարզի Կառնուտի անդեզիտների հանքավայրի անդեզիտաբազալտների Կառնուտ-1 տեղամասի պաշարները հաստատվել են ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ընդերքի գործակալության Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կողմից 2019թ փետրվարի 19-ի թիվ 1 եզրակացությամբ, 2018թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, B կարգով և 1330,2հազ.մ³ ծավալով: Հանքավայրի պաշարները՝ անդեզիտաբազալտներն իրենց քիմիական կազմով և ֆիզիկամեխանիկական հատկություններով պիտանի են շինարարական խճի (ՀՍՏ ԳՕՍՏ 8267-95) և ավազի (ԳՕՍՏ 8736-2014) արտադրության համար: Ընկերության կողմից նախագծված բացահանքի օտարման տարածքը կազմում է 3.45հա, ծառայման ժամկետն ընդունված է 50 տարի:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով. հորատապայթեցման աշխատանքների կիրառմամբ:

Գործունեության համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ, կապված հանքաքարի վերամշակման հետ, ընտրվել է հանքավայրի տարածքում ջարդիչ կայանքի նախատեսումը, ինչը նպատակահարմար է ինչպես բնապահպանական և ֆինանսատնտեսական տեսանկյունից:

Ընկերության կողմից նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով՝

- Ամենամեծ երկարությունը – 323մ,
- Ամենամեծ լայնությունը – 197մ,
- Մակաբացման ապարների միջին հզորությունը – 0.49մ,
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորությունը – 64.4մ,
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝ - 1330.2հազ.մ³,
- Արդյունահանվող պաշարների քանակը– 914.9հազ.մ³,
- Մակաբացման ապարների քանակը – 13.4հազ.մ³

Հանքավայրի բացումը նախատեսված է նրա արևելյան՝ 1700.0 բարձրության նիշից, որի համար 990մ³ ծավալով մակաբացման ապարները բուլդոզերով հավաքվում և բարձվում են ավտոիքնաթափ, այնուհետև տեղափոխվում բացահանքի սահմաններից դուրս N1 լցակույտ: Ավտոճանապարհների անցումը, մակաբացման ապարների հավաքումը կուտակումը կատարվում է ДЗ-130 բուլդոզերի օգնությամբ:



Բացահանքը մշակումն իրականացվելու է ընդլայնական ընթացաշերտերով, միակող մշակման համակարգով:

- աշխատանքային հանքաստիճանի բարձրությունն ընդունված է 5.0մ,
- հանքաստիճանի թեքության անկյունը՝ 80°,
- հանքակողերի թեքության անկյունը՝ 65°,
- անվտանգության առափնեի լայնությունը՝ 2մ:
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 30մ:

Անդեզիտաբազալտները արդյունահանման համար նախատեսված է հորատապայթեցման աշխատանքներ՝ հորատանցքային լիցքերի կիրառմամբ: Հորատանցքերի հորատման համար ընտրվել է СБУ-100 մակնիշի հորատման հաստոց: Որպես պայթեցման միջոցներ նախատեսված են դետոնացիոն քուղ և էլեկտրաճալթիչներ: Հորատապայթեցման բոլոր աշխատանքները նախատեսվում է կատարել մասնագիտացված հատուկ կազմակերպության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է արտաքին և ներքին լցակույտաառաջացում: Ծածկող մակաբացման ապարների (անդեզիտաբազալտների տարաչափ բեկորներ պարունակող դեյուվիալ առաջացումներով ավազակավերը) 13400մ³ ծավալը բուլդոզերի օգնությամբ ավտոինքնաթափով տեղափոխվում է բացահանքի հարավային մասում, 0.5կմ հեռավորության վրա ձևավորվող N1 ժամանակավոր արտաքին լցակույտ: Լցակույտը վերին մասում կունենա 1060մ² մակերես, ստորին հիմքում 2290մ², բարձրությունը կկազմի 8.0մ, թեքման անկյունը՝ 35°: Հանքավայրի շահագործման 46-րդ տարվա վերջում N1 լցակույտից մակաբացման ապարների 12300մ³ ծավալը աստիճանաբար տեղափոխվելու է արդյունահանված տարածքի վրա, պետք է փոփ 0.7մ բարձրությամբ և հարթեցվի՝ ստեղծելով ներքին լցակույտ:

Բացահանքում արդյունահանման աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է բացահանքի լեռնատեխնիկական վերականգնում: Այդ նպատակի համար մակաբացման ապարների մնացած՝ 1100մ³ ծավալը պետք է տեղափոխվի բացահանքի 1620.0մ բարձրության հատակ, 0.7մ բարձրությամբ փովում և հարթեցվում է: Հարթեցման աշխատանքները կատարվելու են բացահանքի հատակի ողջ մակերեսով, ինչպես նաև ավտոճանապարհների, լցակույտի և արդյունաբերական հրապարակի մակերեսով՝ ընդհանուր կազմելով 2.52 հա: Այդ աշխատանքների իրականացման ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 1267.8հազ.դրամ: Աշխատանքները կատարվելու են էքսկավատոր ավտոինքնաթափի բուլդոզեր համալիրով: Քանի որ հանքավայրի տարածքում հողաբուսական շերտը բացակայում է, ուստի կենսաբանական վերականգնում չի նախատեսվում:

Բացահանքի ջրամատակարարումը նախատեսված է աշխատողներին խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Բացահանքում տեխնիկական և խմելու նպատակներով ջուրը կբերվի ջրատար մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ Կառնուտ բնակավայրից: Կենցաղային կեղտաջրերը կլցվեն արտադրական հրապարակում տեղադրվող անջրթափանց բետոնյա հոր, որտեղից պարբերաբար կտեղափոխվեն մոտակա կոյուղու ցանց: Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվել է 88.14մ³/տարի, կամ 0.339մ³ միջին օրեկան, իսկ փոշին նստեցնելու համար ջրի ծախսը կկազմի 4845լիտր/ներսպայտ ՋՏԿ- ի բարձման և բեռնաթափման հրապարակի մակերեսը/:



Քանի որ նախատեսվող գործունեությունը գտնվում է Ախուրյան գետից 1.9կմ, իսկ ջրամբարից 0.7կմ հեռավորության վրա, ուստի հանքավայրի շահագործման արդյունքում ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի դիտարկվում:

Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից (հեռավորությունը աղմուկի աղբյուրից 500մ) գումարային հաշվարկային ճանային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ շատ ցածր:

Ջարդիչ կայանքում մշակվելու է միայն Կառնուտի հանքավայրի հանքաքարը՝ անդեզիտաբազալտները: Կայանքի առավելագույն արտադրողականությունը կկազմի 18300մ³՝ ըստ հանքավայրի արտադրողականության: Հաշվի առնելով հանքաքարի տեսակարար զանգվածը՝ 2.7տ/մ³, արտադրողականությունը կկազմի՝ 49410տ/տարի: Օրական և ժամային առավելագույն արտադրողականությունները կկազմեն՝ 190տ/օր կամ 23.75տ/ժամ: Կառնուտի հանքավայրի հանքաքարի մանրացման համար նախատեսվում տեղադրել 1 հատ "СМД 109" տեսակի այտային ջարդիչ: Ջարդիչը պետք է տեղադրվի մասնակի բետոնյա հիմքերի վրա: Հումքը բեռնատար մեքենաներով տեղափոխվում և բեռնաթափվում է ջարդիչի ընդունման հարթակ, որտեղից բեռնիչի միջոցով տրվում է բունկեր, որտեղ իրականացվում է բազալտի մանրացումը: Մանրացված խիճը ջարդիչից բեռնվում է առաքման բեռնատարի մեջ: Պատվերի բացակայության դեպքում մանրացված հանքաքարը ժամանակավորապես կուտակվում է ջարդիչի մոտի հարթակում: Արտադրական կարիքների ջրօգտագործումը /3.1 մ³/օր ծախսով/ նախատեսված է հանքաքարի խոնավացման համար, որն իրականացվում է ջարդիչի մուտքի մասում և զգալիորեն կարող է նվազեցնել փոշու արտանետումները:

Արտադրական տարածքներում հոսքաջրեր չեն առաջանա: Տարածքից անձրևաջրերի հեռացման կամ հնարավոր արտահոսքերի համար արտադրական հրապարակի ցածրադիր մասում նախատեսված է պարզարան, որտեղ կուտակված հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական մաքրման, որից հետո պարզված ջրերը կարող են օգտագործվել արտադրական նպատակով:

Ջարդիչ ջրամատակարարումը տեխնիկական ջրով կատարվում է Կառնուտի հանքավայրի ջրամատակարարման շրջանակներում՝ ջրի ցիստեռնով: Տարածքում արտադրական նպատակով նախատեսված է տեղադրել նաև 1 հատ ջրի պահուստային տարողություն:

Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է ջարդիչի աշխատանքով, որի արդյունքում առաջանում է անօրգանական փոշի: Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար համակարգչային ծրագրով իրականացվել է վնասակար նյութերի ցրման և գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկներ: Հաշվարկում ներառվել են Ընկերության բացահանքի և ջարդիչ կայանի անշարժ աղբյուրների արտանետումները: Համաձայն հաշվարկների արդյունքների՝ աղտոտվածության առավելագույն մակարդակը կազմել է՝ 0.19 ՄԹԿ, ինչը զգալիորեն ավելի ցածր է թույլատրելի նորմից:

Բացահանքի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, հանքախորշեր, լցակույտեր, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհ) պարբերաբար ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,



- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակադակի նվազեցման նպատակով,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա գտիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական թափոն,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը: Մշտադիտարկումների իրականացման տարեկան ծախսերը կկազմեն 300.0 հազ ՀՀ դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կառնուտ գյուղում անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում Կառնուտ գյուղից աշխատատեղերի ստեղծումը և Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և արտակարգ իրավիճակների նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Շիրակի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տրվել է արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության թիվ 2408 եզրակացություն:

Վերլուծելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննության և հանրային քննարկումների արդյունքները, պետք է փաստել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված



